ՄԱԿ ՓԳՀ-ի և իր գործընկեր կազմակերպությունների կողմից տրամադրվող բոլոր ծառայություններն անվճար են:

Եթե ունեք տեղեկություններ ՄԱԿ ՓԳՀ աշխատակիցների, ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկերների կամ կապալառուների անձնակազմի մասին, որոնք ներգրավված են կոռուպցիայի, շահագործման (ներառյալ սեռական շահագործումը), խարդախության կամ սեռական բռնության մեջ, անհապաղ հաղորդեք այդ մասին:

ՄԱԿ ՓԳՀ-ի կամ իր գործընկեր կազմակերպությունների դեմ բողոք ներկայացնել կարող եք ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկեր կազմակերպությունների գրասենյակներում՝ լրացնելով բողոքի ստանդարտ ձևը հասանելի հետևյալ լեզուներով՝ անգլերեն, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն, պարսկերեն, թուրքերեն և արաբերեն, կամ ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակում բողոքի արկղի միջոցով կամ ուղարկելով էլ. նամակ՝ armyecomplaint@unhcr.org, կապվելով ՄԱԿ ՓԳՀ գլխավոր տեսչի գրասենյակի հետ՝ inspector@unhcr.org:

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԱԿ ՓԳՀ)

ՄԱԿ-ի գրասենյակ
Պետրոս Ադամյան փ. 14,
Երևան 0010, Հայաստան
Հեռ.՝ +37410 545 937 (ext.117)
Թեժ գիծ: 08000 0025
+37491 415 387
Էլ-փոստ: armyeprt@unhcr.org
Վեբ-կայք: https://www.unhcr.org
https://www.un.am/en/UNHCR
https://help.unhcr.org/armenia/
UNHCR Armenia Facebook, Instagram,
Twitter, YouTube

UNHCR
The UN Refugee Agency

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ, ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ և ԱՅԼ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՄԱԿ ՓԳՀ Հայաստան 2021

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԱԿ ՓԳՀ) հիմադրվել է 1950 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից: ՄԱԿ ՓԳՀ-ի մանդատն է՝ առաջնորդել և համակարգել փախստականների, ապաստան հայցողների և քաղաքացիություն չունեցող անձանց միջազգային պաշտպանությանն ուղղված քայլերն ամբողջ աշխարհում և կառավարությունների հետ միասին նրանց համար կայուն լուծումներ որոնել: Փախստականների միջազգային պաշտպանության ապահովման առաջնային պատասխանատվությունը կրում են ընդունող կառավարությունները:

ՄԱԿ ՓԳՀ-ի դերը Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) հանդիսանում է 1951 թ. Փախստականների կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիայի անդամ պետություն: Փախստականի կարգավիճակի դիմումները պետք է ներկայացվեն ՀՀ Միգրացիոն ծառայություն: Այս պետական մարմինը որոշում է կայացնում՝ արդյոք հայցվորը ստանում է փախստականի կարգավիճակ Հայաստանում:

Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ-ն չի գրանցում փախստականներին և չի տրամադրում փախստականի փաստաթղթեր: Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ-ի դերն է՝ աջակցել պետական մարմիններին՝ ապահովելու ապաստանի տրամադրման որակյալ ընթացակարգեր, օժանդակել փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ պարտականությունների իրականացմանը՝ միջազգային իրավունքին և նորմերին համապատասխան: ՄԱԿ ՓԳՀ-ն և իր գործընկեր կազմակերպությունները աջակցում են ապաստան հայցողներին՝ տրամադրելով սոցիալական և իրավական խորհրդատվություն և դատական ներկայացուցչություն:

Ապաստան հայցողների, փախստականների, քաղաքացիություն չունեցող անձանց և ՄԱԿ ՓԳՀ-ի մտահոգության այլ բնակչության հիմնական կարիքները բավարարելու հարցում կառավարության ջանքերը լրացնելու նպատակով ՄԱԿ ՓԳՀ-ն՝ իր գործընկեր հասարակական կազմակեպությունների միջոցով, նպաստում է առողջապահության, կրթության, կենսապահովման աջակցության և եկամտի ստեղծման ոլորտում աջակցության բացերի լրացմանը:

ՄԱԿ ՓԳՀ-ն նաև դասընթացներ է կազմակերպում պետական պաշտոնյաների, ՀԿ աշխատակիցների, ինչպես նաև փախստականների պաշտպանության հարցերում այլ կարևոր դերակատարների համար:

ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը քարոզում է ազգային իրավական դաշտի և քաղաքականության բարելավումը՝ տրամադրելով խորհրդատվություն և փորձի փոխանակում:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը չի ընդունում և/կամ ընթացք չի տալիս այլ երկրներում ապաստան հայցելու համար ներկայացված դիմումներին:

Հայաստանում ապաստանի հարցերով լիազոր մարմին

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայություն

Գործունեության շրջանակը՝

✓ Ապաստան հայցողների ընդունելություն
✓ Փախստականի կարգավիճակի որոշում
✓ Փախստականների ինտեգրման խթանում՝ գործընկեր կազմակերպությունների ծրագրերին ուղղորդման միջոցով
✓ Կառավարության ծառայությունների և օժանդակության ծրագրերի վերաբերյալ խորհրդատվություն

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցի փ. 31
Հեռ.՝ 033 275 024, 033 275 034, 060 275 024, 060 275 034
Էլ-փոստ՝ migrationservice.sms@mta.gov.am
Վեբ-կայք: www.smsmta.am

ՄԱԿ ՓԳՀ-ի հիմական գործընկերները 2021 թ.

Որոշ օգնության ծրագրեր կարող են լինել սահմանափակ և ուղղվել առավել հրատապ կարիքներ ունեցող անհատներին և ընտանիքներին: Խնդրում ենք ճշտել անմիջապես գործընկեր կազմակերպության հետ:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ

«Առաքելություն Հայաստան»-ի կենտրոնական գրասենյակում, ցերեկային կենտրոններում, Ապաստան հայցողների հատուկ կացարանում, ինտեգրացիոն և սոցիալական տներում իրականացվող գործառույթներ.

✓ Սոցիալական ծառայություններ (խորհրդատվություն, արտակարգ իրավիճակների աջակցություն, դեպքիվարում, ուղղորդում)
✓ Իրավաբանական աջակցություն (խորհրդատվություն, իրա-վունքների պաշտպանություն և դատական ներկայացուցչու- թյուն)
✓ Առողջապահական ծառայություններ (տեղեկատվական աջակցություն, ուղղորդում պոլիկլինիկաներ և հիվանդանոցներ և դեղորայքի տրամադրում)
✓ Խնամքի ծառայություններ (հաշմանդամերի/տարեցների համար)
✓ Իրազեկում և շահերի պաշտպանություն
✓ Մարդասիրական դրամական օգնություն
✓ Մարդասիրական օգնություն՝ հիմական պարենային / ոչ պարենային ապրանքների տեսքով
✓ Ժամանակավոր կացարանի աջակցություն՝ սոցիալական տների և վարձի փոխհատուցման միջոցով
✓ Օգնություն Լեռնային Ղարաբաղից փախստականի նման իրավիճակում գտնվող անձանց.

➢ Կացարանային պայմանների բարելավում՝ հանրային կացարանների արագ շտկման աշխատանքներ, կացարանի վերանորոգում արտակարգ իրավիճակներում և սարքավորումների ձեռքբերում
➢ Սանիտարական պայմանների բարելավում՝ հիգիենայի պարագաների բաշխում
➢ Կանանց և երեխաների կարողությունների զարգացում համայնքի հոգեբանական, կրթական և կենսապահովման կենտրոններում
➢ Խաղաղ համակեցության նախագծեր, որոնք նպաստում են փախստականների համար բարենպաստ միջավայրին

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհ փ. 42
Հեռ.՝ 010 444 792, 094 440 793, 096 403 545
Էլ-փոստ՝org@ngo.mission.am
Վեբ-կայք՝ www.mission.am
Facebook: MissionArmenia

Հայկական Կարմիր խաչի ընկերություն

Գործունեության շրջանակը

✓ Խորհրդատվության տրամադրում և ուղղորդում
✓ Փախստականի և/կամ ապաստան հայցողի կարգավիճակ ունեցող անձանց համար հայոց լեզվի դասընթացների կազմակերպում
✓ Շաբաթական մոնիթորինգային այցերի իրականացում Հատուկ կացարանում
✓ Ամսական մոնիթորինգային այցերի իրականացում սահմանային անցման կետերում և դասընթացների իրականացում սահմանապահների համար
✓ Տեղեկատվական հանդիպումների կազմակերպում և տեղեկատվական նյութերի տրամադրում
✓ ԳՊԲ դեպքի վարում
✓ Հոգեբանական աջակցության տրամադրում
✓ Երեխաների պաշտպանության դեպքի վարում և կրթության աջակցություն
✓ Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների վերաբերյալ տեղեկատվական նյութերի տրամադրում
✓ Թարգմանչական ծառայությունների մատուցում
✓ Փախստականի կարգավիճակ ունեցող և Սիրիայից տեղահանված անձանց տնտեսական ինտեգրման ծրագրի իրականացում՝

➢ Աշխատանքային գործիքների աջակցություն
➢ Վճարովի մասնագիտական պրակտիկայի ապահովում
➢ Աշխատանքային զբաղվածության ապահովման աջակցություն

✓ Օգնություն Լեռնային Ղարաբաղից փախստականի նման իրավիճակում գտնվող անձանց.

➢ Ոչ պարենային ապրանքների տրամադրում
➢ Համայնքահեն պաշտպանության գործողությունների իրականացում
➢ Պաշտպանության մշտադիտարկման գործողությունների իրականացում

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պարոնյան փ. 21/1
Հեռ.՝ 060 625 063
Էլ. փոստ՝arcs-pm@redcross.am
Վեբ-կայք՝ https://www.redcross.am/en/home.html
Facebook: Armenian Red Cross Society

«Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ

«Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը ապահովում է ՄԱԿ ՓԳՀ թեժ գծի աշխատանքը ՄԱԿ ՓԳՀ-ի անունից և իրականացնում է՝

➢ ՄԱԿ ՓԳՀ-ի և գործընկերների աջակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
➢ ՄԱԿ ՓԳՀ-ի և գործընկերների աշխատանքի վերաբերյալ հետադարձ կապի ապահովում: